**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 հունվարի 2025թ. թիվ 47-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 21-Ի
ԹԻՎ 80-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 3-րդ մասով, հաշվի առնելով «Գուգարք» կենտրոնական պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի տնօրենի 07.01.2025թ. թիվ 1 գրությունը՝

Ո ր ո շ ու մ   եմ.

1. ՀՀ Լոռու մարզպետի 2023 թվականի փետրվարի 21-ի «Գուգարք» կենտրոնական պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի բժշկական օգնության և սպասարկման վճարովի ծառայությունների գները հաստատելու և ՀՀ Լոռու մարզպետի 2022 թվականի մայիսի 10-ի թիվ 245-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 80-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) «Քիթ-կոկորդ-ականջաբանական նեղ մասնագիտական բուժօգնություն և սպասարկում» բաժնի «3. Լսողական համակարգի ստուգում (աուդոմետրիա)» տողում «3100» թիվը փոխարինել «3500» թվով,
2) «Ստոմատոլոգիական բուժօգնություն» բաժնում կատարել հետևյալ փոփոխությունները՝
   ա. «2. Կարիեսի բուժում» տողում «4000» թիվը փոխարինել «10000» թվով,
   բ. «4. Ատամնաքարերի հեռացում» տողում «4000» թիվը փոխարինել «7000» թվով,
   գ. «5. Պուլպիտ» տողում «8000» թիվը փոխարինել «12000» թվով,
   դ. «6. Պերիոդոնտիտ» տողում «9000» թիվը փոխարինել «18000» թվով,
   ե. «8. Ատամի հեռացում» տողում «2000» թիվը փոխարինել «4000» թվով,
   զ. «9. Բերանի խոռոչի փափուկ հյուսվածքների հեռացում» տողում «8000» թիվը փոխարինել «10000» թվով,
   է. «13. Ատամի ռենտգեն հետազոտություն» տողում «1000» թիվը փոխարինել «1500» թվով,
   ը. «14. Այլ աշխատանք /անզգայացում/» տողում «500» թիվը փոխարինել «2000» թվով,
3) «Արյան կենսաքիմիական հետազոտություն» բաժինը լրացնել նոր տողով՝

| | | | |
|---|---|---|---|
| 19 | Վիտամին B12 | 1 հետազոտություն | 6 000 |

4) «Հորմոնալ հետազոտություններ» բաժինը լրացնել նոր տողով՝

| | | | |
|---|---|---|---|
| 8 | Պրոլակտին | 1 հետազոտություն | 4 000 |

5) «Ածխաջրատային փոխանակություն» բաժնի «1. Գլիկոզիլացված հեմոգլոբին» տողում «3100» թիվը փոխարինել «4000» թվով,
6) «ԱԱՊ բժշկական հաստատությունների սահմանված կարգով չգրանցված անձանց համար և ԱԱՊ բժշկական հաստատությունների սահմանված կարգով գրանցված անձանց համար առանց բժշկական ցուցման» բաժնում կատարել հետևյալ փոփոխությունները՝
ա. «1. Արյան ընդհանուր քննություն» տողում «700» թիվը փոխարինել «1000» թվով,
բ. «3. Մեզի ընդհանուր քննություն» տողում «700» թիվը փոխարինել «1000» թվով,
7) «Ֆունկցիոնալ հետազոտություններ» բաժնում կատարել հետևյալ փոփոխությունները՝
ա. «2. Հոլթեր մոնիտորինգ» տողում «9100» թիվը փոխարինել «12000» թվով,
բ. «3. Սպիրոմետրիա» տողում «2700» թիվը փոխարինել «3500» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

X

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՂԱԶԱՐՅԱՆ

2025թ. հունվարի 29
ք.Վանաձոր